Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 119

ք. Երևան **18.12.2023թ.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի 34/14.3/13555-2023, ՀՀ շրջակա միջավայրի 3/02.6/8859-2023, ՀՀ էկոնոմիկայի 04/9980-2023 նախարարությունների, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի և Ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչությունների, Քաղաքաշինության կոմիտեի 06/11.2/6751-2023 և Կադաստրի կոմիտեի ԳՄ/16894-2023 գրություններով ներկայացրած դրական կարծիքները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն **ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ծաթեր բնակավայրի** հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է Ալավերդի համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողերից **0.7575 հա** (կադաստրային ծածկագիր՝ 06-048-0004-0016) գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր փոխադրել բնակավայրերի հողեր նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողեր գործառնական նշանակության:

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Տերտերյան

քարտուղար՝ Հ. Մկրտչյան